ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)
ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ «ՀՀԿՄԳԳ-ՊԸԱՇՁԲ-01/16»

Պատվիրատուն՝ Գեղաշենի համայնապետարանը, որը գտնվում է կոտայքի մարզ Գ. Գեղաշեն 1-ին փողոց N30 հասցեում, ստորև ներկայացնում է «ՀՀԿՄԳԳ-ՊԸԱՇՁԲ-01/16» ծածկագրով հայտարարված պարզեցված ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի /երի/ մասին տեղեկատվությունը:

Գնման առարկայի								
Չափաբաժնի համարը	Անվանումը	Չափման միավորը	Քանակը[1]		Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/		Համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր)	Պայմանագրով նախատեսված համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր)
			Առկա ֆինանսական միջոցներով[2]	ընդհանուր	Առկա ֆինանսական միջոցներով[3]	ընդհանուր		
1	Փողոցների ասֆալտի փոսային վերանորոգում	քմ	1180		6780906		ասֆալտապատ ծածկույթի փոսային վերանորոգում	ասֆալտապատ ծածկույթի փոսային վերանորոգում

Գնման ընթացակարգի ընտրության հիմնավորումը	Գնման առարկան ներառված է ՀՀ ՖՆ կողմից շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում

Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման[4]					
Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Բյուջե	Արտաբյուջե
04	05	01	51		
...					

Հրավեր՝ուղարկելու կամ հրապարակելու ամսաթիվը		13.07.2016թ.	
Հրավերում կատարված փոփոխությունների ամսաթիվը[5]	1		
	...		
Հրավերի վերաբերյալ պարզաբանումների ամսաթիվը		Հարցման ստացման	Պարզաբանման
	1		
	...		

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Ցուցաբերյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ[6]		
		Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
Չափաբաժին 1				
1	«Բալահովիտ-1» ՍՊԸ	5650755	1130151	6780906
2	«Վահրադյան Շին»ՍՊԸ	7078470	1415694	8494164

Այլ տեղեկություններ	Ծանոթություն՝ Եթե գնման ընթացակարգում կիրառվել են Գնումների որոշը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված բանակցություններ գների նվազեցման նպատակով:

Տվյալներ մերժված հայտերի մասին										
		Գնահատման արդյունքները (բավարար կամ անբավարար)								
Չափաբաժնի համարը	Մասնակցի անվանումը	Ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանություն	Հրավեր-ով պահանջվող փաստաթղթերի առկայությունը	Առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշների համա-	Մասնագիտական գործունեություն	Մասնագիտական փորձառություն	Ֆինանսական միջոցներ	Տեխնիկական միջոցներ	Աշխատանքային ռեսուրսներ	Գնային առաջարկ

[1] Լրացվում է կնքված պայմանագրով գնվելիք ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը
[2] Լրացնել միայն պայմանագրի շրջանակներում առկա ֆինանսական միջոցներով գնվելիք ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը, իսկ պայմանագրով նախատեսված ընդհանուր ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը լրացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:
[3] Եթե միայն պայմանագրի շրջանակներում նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա լրացնել առկա ֆինանսական միջոցներով նախատեսված գումարի չափը, իսկ ընդհանուր գումարը լրացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:
[4] Այլ աղբյուրներից ֆինանսավորվելու դեպքում նշել ֆինանսավորման աղբյուրը
[5] Նշվում են հրավերում կատարված բոլոր փոփոխությունների ամսաթվերը:
[6] Եթե առաջարկված գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա գրել միայն հրավերով սահմանած փոխարժեքով՝ Հայաստանի Հանրապետության դրամով:

		յուսք		պատասխա-նությունը						
...										

Այլ տեղեկություններ	Ծանոթություն՝ Հայտերի մերժման այլ հիմքեր:
	Տեղեկություններ՝ մինչև 15% գնային նախապատվություն ստացած մասնակիցների վերաբերյալ

Ընտրված մասնակցի որոշման ամսաթիվը	26.07.2016	
Անգործության ժամկետ	Անգործության ժամկետի սկիզբ	Անգործության ժամկետի ավարտ
	10.08.2016	15.08.206
Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկի ծանուցման ամսաթիվը	16.08.2016	
Ընտրված մասնակցի կողմից ստորագրված պայմանագիրը պատվիրատուի մոտ մուտքագրվելու ամսաթիվը	16.08.2016	
Պատվիրատուի կողմից պայմանագրի ստորագրման ամսաթիվը	14.04.2016	

Չափա-բաժնի համարը	Ընտրված մասնակիցը	Պայմանագրի					
		Պայմանագրի համարը	Կնքման ամսաթիվը	Կատարման վերջնա-ժամկետը	Կանխա-վճարի չափը	Գինը ՀՀ դրամ	
						Առկա Ֆինանսակա-ն միջոցներով	Ընդհանուր՝
1	«Բալահովիտ-1»ՍՊԸ	ՀՀԿՄԳԳ-ՊԸԱՇՁԲ-01/16	16.08.2016	30.09.2016	-	6780906	6780906

Ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և հասցեն

Այլ տեղեկություններ	Ծանոթություն՝ Որևէ չափաբաժնի չկայացման դեպքում պատվիրատուն պարտավոր է լրացնել տեղեկություններ չկայացման վերաբերյալ:
Մասնակիցների ներգրավման նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները	
Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը	
Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները	
Այլ անհրաժեշտ տեղեկություններ	

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող

Անուն, Ազգանուն	Հեռախոս	Էլ. փոստի հասցե
Լուսինե Հովհաննիսյան	060-286013	gechashen67@mail.ru

Պատվիրատու՝ Գեղաշենի համայնքապետարան

[1] Եթե պայմանագիրը կնքվելու է ընդհանուր արժեքով, սակայն նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա ընդհանուր գինը լրացնել սվյալ սյունակում, իսկ առկա ֆինանսական միջոցների մասով՝ «Առկա ֆինանսական միջոցներով» սյունակում:

Հավելված 6՝

N «ՀՀ ԿՄԳԳ-ՊԸԱՇՁԲ-01/16» ծածկագրով

պարզեցված ընթացակարգի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ *N* «ՀՀ ԿՄԳԳ-ՊԸԱՇՁԲ-01/16»

գ.Գեղաշեն <<16 >> <<օգոստոսի >> 2016թ.

<<**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**>>-ը, ի դեմս Գեղաշեն համայնքի ղեկավար Ա. Հովհաննիսյանի, որը գործում է <<Համայնքապետարանի>> կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բալահովիտ-1>>ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ռ. Բաղդասարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԻ ՓՈՍԱՅԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ <<30 սեպտեմբերի 2016թ.>>:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

---

[1] *Սույն հավելվածը հրավերից հանվում է, եթե գնման առարկա չեն հանդիսանում շինարարական աշխատանքները:*

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված --------- ------- օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[2]:

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են սույն պայմանագրի N – Հավելվածում[3]:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է՝ պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից երկօրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության

---

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 6780906 (վեց միլիոն յոթ հարյուր ութսուն հազար ինը հարյուր վեց) ՀՀ դրամ, որից 1130151 (մեկ միլիոն մեկ հարյուր երեսուն հազար մեկ հայոր հիսունմեկ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, 559985(հինգ հարյուր հիսունինը հազար ինը հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամը՝ շահույթ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[1]:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30 սեպտեմբերի 2016թ. ՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[5].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[6]:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

---

[5] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

[6] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում[7]:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[8]:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման

---

[7] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

[8] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարան գ. Գեղաշեն, 1փ 30 ՀՀ Ֆիննախ Հ/Հ 900106209027 ՀՎՀՀ 03502366	«Բալահովիտ-1» ՍՊԸ Կոտայքի մարզ գ. Բալահովիտ Հ/Հ 1930030876430100 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Արովյան մ/6 ՀՎՀՀ 03502736
_____ Ա. Հովհաննիսյան /ստորագրություն/ Կ.Տ	_____ Հ. Բաղդասարյան /ստորագրություն/

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
<< 16 >> օգոստոսի 2016 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ԿՄԳԳ-ՊԸԱՇՁԲ-01/16» գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Գեղաշեն համայնքի փողոցների ասֆալտբետոնե ծածկի փոսային վերանորոգման աշխատանքների

N	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափման միավոր	Քանակը	Արժեքը	Ընդամենը / ՀՀ դրամ /
1	5սմ հաստությամբ ասֆալտի փոսային վերանորոգում մինչև 5քմ մակերեսներում	քմ	750	4410.20	3 307 650
2	5սմ հաստությամբ ասֆալտի փոսային վերանորոգում մինչև 25քմ մակերեսներում	քմ	430	4146.79	1 783 120
	Ընդամենը				5 090 770
	Շահույթ 11 %				559 985
	Ընդամենը				5 650 755
	Ա. Ա. Հ 20 %				1 130 151
	Ընդամենը				6 780 906

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Գեղաշենի համայնքապետարան
Հ Հ Ֆ Ն գործառնական վարչություն
Հ/Հ 900106209027

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ԲԱԼԱՀՈՎԻՏ-1>> ՍՊԸ
Կոնվերսբանկ Արովյան մ/ճ
Հ/Հ 19300308764300100

Կ.Տ

Հավելված թիվ 2
<< 16 >> օգոստոսի 2016 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ N «ՀՀ ԿՄԳԳ-ՊԸԱՇՁԲ-01/16»
գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԻ ՓՈՍԱՅԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Գեղաշենի համայնքապետարանի փողոցների ասֆալտի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	30.09.2016թ.
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Կոտայքի մարզի
Գեղաշենի համայնքապետարան
գ. Գեղաշեն, 1փ 30
ՀՀ Ֆիննախ
Հ/Հ 900106209027
ՀՎՀՀ 03502366

_____ Ա. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բալահովիտ-1» ՍՊԸ

Կոտայքի մարզ գ. Բալահովիտ
Հ/Հ 1930030876430100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Աբովյան մ/ճ
ՀՎՀՀ 03502736

_____ Հ. Բաղդասարյան
(ստորագրություն)

Հավելված թիվ 3
<< 16>>" օգոստոսի 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ N «ՀՀ ԿՄԳԳ-ՊԲԱՇՁԲ-01/16»
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Գեղաշենի համայնքապետարանի փողոցների ասֆալտի վերանորոգման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	**100 %**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Կոտայքի մարզի
Գեղաշենի համայնքապետարան
գ. Գեղաշեն, 1փ 30
ՀՀ Ֆիննախ
Հ/Հ 900106209027
ՀՎՀՀ 03502366

Ա. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բալահովիտ-1» ՍՊԸ

Կոտայքի մարզ գ. Բալահովիտ
Հ/Հ 1930030876430100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Աբովյան մ/ճ
ՀՎՀՀ 03502736

Ռ. Բաղդասարյան
(ստորագրություն)

Հավելված թիվ 4.1
<< 16>> օգոստոսի 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀԿՄԳԳ-ՊԸԱՇՁԲ 01/16>> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Գեղաշենի համայնքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) և «Բալահովիտ-1» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2016թ. օգոստոսի 16- -ին կնքված N ՀՀԿՄԳԳ-ԱՇՁԲ 01/16 գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
Անվանումն, անունը
_____
Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
Ազգանուն, անուն
_____
Ստորագրություն